ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ
MISSION ARMENIA NGO

«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## Ամփոփ տեղեկանք

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է 1988թ.-ին: Կազմակերպությունը մշակված համայնքահեն համակարգի միջոցով սոցիալ-առողջապահական ծառայություններ է մատուցում տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականներին, տեղահանված անձանց, ապաստան հայցողներին եւ այլ խոցելի խմբերին:

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում, հետևողական իր տեսլականին և նպատակին, կարիքից ու անհրաժեշտությունից ելնելով, ՀՀ մարզերում եւ Երեւան քաղաքում ներդրել և զարգացրել է համայնքահեն սոցիալ-առողջապահական ծառայությունների մատուցման տարբեր ենթակառույցներ (ցերեկային կենտրոններ, բարեգործական ճաշարաններ, երեխաների զարգացման կենտրոններ, սոցիալական տուն (առաջինը ՀՀ-ում) և այլն) ընդգրկող ընդհանրական մոդել, որը շահառուներին հնարավորություն է ընձեռում բազմաբնույթ սոցիալ-առողջապահական ծառայություններ ստանալ իրենց տներում, համայնքներում՝ չկտրվելով հարազատ միջավայրից, ապրելով արժանապատիվ, ինքնուրույն, անկախ եւ ակտիվ կյանքով:

Ստեղծված կառույցները հնարավորություն են ընձեռում արագ արձագանքել ժամանակի մարտահրավերներին և աջակցել դրանց հետևանքով դժվարին իրավիճակում հայտնված խոցելի խմբերին: Ներկայումս Կազմակերպությունն աջակցում է շուրջ 60,000 տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների, ապաստան հայցողների, տեղահանված անձանց եւ այլ խոցելի խմբերի:

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է համագործակցելով ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ), ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), , Եվրոպական Միության, տեղական և միջազգային այլ կազմակերպությունների հետ:

Իր ենթակառույցների միջոցով Կազմակերպությունը շահառու խմբերին տրամադրում է սոցիալ-հոգեբանական, առողջապահական, իրավաբանական աջակցություն, սննդի տրամադրում բարեգործական ճաշարանների միջոցով, տնային խնամքի իրականացում, հումանիտար աջակցություն, երեխաների զարգացմանն ուղղված ծառայություններ, ինչպես նաև շահերի պաշտպանություն: Կազմակերպությունը մի շարք օրենսդրական փոփոխությունների ժամանակ ներկայացնում է առաջարկներ և նկատառումներ՝ ուղղված թիրախ խմբերի իրավունքների և շահերի պաշտպանությանը:

2022 թվականին Կազմակերպությունը Հայաստանում Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ գործընկերությամբ մշակել է ՀՀ-ում քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության և ապաքաղաքացիության կանխարգելման ու կրճատման ոլորտի բարեփոխումների վերաբերյալ հայեցակարգը»:

Հայաստան, Երեւան 0026, Նժդեհ 42 հեռ. (010) 444-792, էլ.փոստ. org@ngo.mission.am URL: www.mission.am
42 Nzhdeh, Yerevan 0026, Armenia Tel: (010) 444-792, E-mail: org@ngo.mission.am URL: www.mission.am

2024 թվականին Կազմակերպությունը ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի հայաստանյան գրասենյակի հետ գործակցության շրջանակում, ներգրավելով ոլորտի առաջատար փորձագետ, ՀՀ ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ակտիվ մասնակցությամբ մշակել է «Փախստականների և ապաստանի մասին օրենքում» և հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ:

2024 թվականին Կազմակերպությունը նաև մշակել է «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի նախագիծ՝ ակտիվ համագործակցելով ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, ՀՀ ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության և այլ շահագրգիռ կառույցների հետ:

2025 թվականից Կազմակերպությունը Ապաքաղաքացիության եվրոպական ցանցի (ENS) և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ աշխատում է Հայաստանի ապաքաղաքացիության ինդեքսի վրա: «Ապաքաղաքացիության ինդեքս» ծրագիրը գնահատում է Հայաստանում քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների պաշտպանությունն ու մեր երկրի ջանքերը ապաքաղաքացիության կանխարգելման և կրճատման ուղղությամբ: Այն ոչ միայն ոլորտում առկա իրավիճակի գնահատում է, այլ նաև հնարավորություն՝ վերհանելու խնդիրներն ու բացերը, ինչպես նաև օգտագործելու ENS-ի փորձն ու մասնագիտական կարողությունները՝ ապաքաղաքացիության կանխարգելման և կրճատման հարցում առաջընթաց գրանցելու համար:

Ստորև հակիրճ ներկայացվում են նաև Կազմակերպության կողմից վերջին 5 տարիներին իրականացրած և ոլորտին առնչվող ծրագրերը՝

| Հ/Հ | Ծրագրի անվանումը | Ֆինանսավորող կազմակերպություն/մարմին | Ծրագրի նկարագրություն |
|---|---|---|---|
| 1 | Ցերեկային և տնային խնամքի ծառայությունների տրամադրում տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց | ՀՀ կառավարություն/ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակում Կազմակերպությունը մի շարք ծառայություններ (սոցիալ-հոգեբանական, իրավաբանական, սննդի տրամադրման) է տրամադրում Երևանում և տարբեր մարզերում |

Հայաստան, Երեւան 0026, Նժդեհ 42 հեռ. (010) 444-792, Էլ.փոստ. org@ngo.mission.am URL: www.mission.am
42 Nzhdeh, Yerevan 0026, Armenia Tel: (010) 444-792, E-mail: org@ngo.mission.am URL: www.mission.am

| | | | |
|---|---|---|---|
| | | | բնակվող տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց |
| 2 | «Հայաստանում փախստական եւ տեղահանված անձանց արխիվային փաստաթղթերի թվայնացում» | Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, Շվեդիայի միջազգային զարգացման գործակալություն | Ծրագրի շրջանակում Կազմակերպությունը թվայնացնում և Միգրացիայի և քաղաքացիության ծառայության էլեկտրոնային շտեմարան է մուտք անում 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց արխիվային փաստաթղթերը |
| 3 | Կյանքի բարելավում համապարփակ սոցիալական, առողջապահական, մարդասիրական նախաձեռնությունների և իրավունքների իրազեկման արշավների միջոցով | ՄԱԿ Փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակ | Ծրագրի շրջանակում Կազմակերպությունը սոցիալ-առողջապահական, իրավաբանական, հոգեբանական, հումանիտար աջակցություն է տրամադրում Հայաստանում բնակվող փախստականներին, ապաստան հայցողներին, ինչպես նաև տրամադրում է իրավաբանական աջակցություն քաղաքացիություն չունեցող անձանց |
| 4 | Ծագման երկրի տեղեկության հետազոտության փորձնակի ծրագիր՝ Հայաստանում | ԱՄՆ դեսպանատուն | Ծրագիրը նպատակ ունի Հայաստանում ապաստանի համակարգը բարելավելու համար փորձնակներին տրամադրել ծագման |

| | | | |
|---|---|---|---|
| | ապաստանի համակարգը բարելավելու համար | | երկրի տեղեկության ձեռք բերման հմտություններ: |
| 5 | Քաղաքացիություն չունեցող անձանց մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված քայլերի իրականացում | ԱՄՆ դեսպանատուն/Ջուլիա Թաֆտ հիմնադրամ | Ծրագրի նպատակն է իրականացնել մի շարք քայլեր՝ ուղղված քաղաքացիություն չունեցող անձանց մասին իրազեկվածության բարձրացմանը: |
| 6 | Հակամարտությունից տուժած անձանց համար բազմաեսկտոր իրատապ աջակցություն Հայաստանում | Եվրոպական միություն | Ծրագիրը նպատակ ունի Արցախից բռնի տեղահանված անձանց տրամադրել սոցիալ-հոգեբանական և իրավաբանական աջակցություն: |

Հայաստան, Երեւան 0026, Նժդեհ 42 հեռ. (010) 444-792, էլ.փոստ. org@ngo.mission.am URL: www.mission.am
42 Nzhdeh, Yerevan 0026, Armenia Tel: (010) 444-792, E-mail: org@ngo.mission.am URL: www.mission.am